ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«Եւրոպայի հայ ուսանողութեան միութեան» Տեղեկագրի մէջ բերուած են մի քանի հետաքրքրական թուեր, որոնց հետ աւելորդ չենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին։

1900 թուականին եւրոպական զանազան պետութիւնների մէջ ուսանում էին.

Անգլիայում	7	հոգի	որոնցից	1	ռ.[1])	4	տ.[2])	2	ա. պ.[3])
Դանիայում	26	»	»	—	»	—	»	26	»
Բելգիայում	6	»	»	3	»	3	»	—	»
Գերմանիայում	86	»	»	72	»	14	»	—	»
Շվէյցարիայում	51	»	»	32	»	18	»	1	»
Իտալիայում	25	»	»	2	»	23	»	—	»
Ֆրանսիայում	70	»	»	18	»	49	»	3	»
Ընդամենը	271	»	»	128	»	111	»	32	»

Ըստ մասնագիտութեան հայ ուսանողները դասաւորուած էին հետեւեալ կերպով.

Բնական գիտութիւններ էին	ուսանում	136	(70).
Տեխնիկա	» »	54	(28).
Փիլիսոփայութիւն	» »	54	(23).
Գեղարուեստ	» »	14	(6).
Վաճառականական գիտութիւններ		5	(0).
Անյայտ		3	(1).

Փակագիծներում մենք դրել ենք ռուսաստանցի հայ ուսանողների քանակութիւնը ցոյց տուող թուերը։

Եւրոպայի հայ ուսանողները նախնական կրթութիւն են ստացել՝ հայոց դպրոցներում 148 հոգի, իսկ օտար նախնական դպրոցներում եղածների թիւը 40 է, մինչդեռ միջնակարգ կըր-

---

[1]) Ռ.=Ռուսաստանցի, [2]) Տ.=Տաճկաստանցի, ա. պ.=այլ պետութիւններից։

թութիւն ստացածներից 106 հայոց դպրոցներից էին և 127 օտար դպրոցներից։

Հայոց դպրոցներում նախնական կրթութիւն ստացած 148 հոգուց, 64 Ռուսաստանից էին, 80 Տաճկ.-ից և 4 այլ պետ.-ից. հայոց միջնակարգ դպրոցներում ուսած 106 հոգուց, 22 Ռուսաստանից, 81 Տաճկ.-ից և 3 այլ պետ.-ից։ Օտար դպրոցներում նախնական կրթութիւն ստացած 40 հոգուց 30 Ռուսաստ., 3 Տաճկ. և 7 այլ պ.-ից, միջնակարգ կրթութիւն ստացած 127 հոգուց 97 Ռուսաստ., 7 Տաճկ. և 23 այլ պ.-ից։

Բոլոր 271 հայ ուսանողներից միայն 161 հոգի էին տիրապետում մայրենի լեզուին, իսկ մնացածների համար (չը հաշուած 13 հոգի, որոնց մասին տեղեկութիւն չը կայ) հայերէն լեզուն խորթ է եղել։ Այդ օտարախօսներից 97 հոգի Ռուսաստանից էին, 23 հոգի այլ պետութիւններից (մեծ մասը, 22 հոգի, լեհախօս հայեր Աւստրիայից) և միայն 4 հոգի Տաճկաստանից։

Հետաքրքրական է իմանալ՝ օտարական հայ ուսանողներից քանիսի՞ մէջ է զարգացել գիտակցութիւնը—սովորել մայրենի լեզուն, որը անհրաժեշտ գործիք է՝ կեանքի մէջ հարազատ ժողովրդին օգտակար լինելու համար...։

*